

զՅոհաննէս քահանայն եւ աւագերէց սուրբ Աստուածածնին եւ զՅովանէս փրկիստփայն զԱմիրըուսենց: Եւ զԳորգ փրկիստփայն. եւ զՍտեփաննոս քահանայն եւ զԱստուածատուր փրկիստփայն. եւ զԱտոմ փրկիստփայն. զԾե-
րուն զրազիրն. զՍարգիս քահանայն եւ այլք որ զնացին առ Քրիստոս: Ձեջէ Քրիստոս Աստուած զիւրեանց ձեռագիր յանցանացն: Իսկ զԿենդանիքս՝ զՍտեփաննոս քահանայն որդի Յոհաննէս քահանայն, եւ զորդի նորին Յոհաննէս քահանայ: Այլ եւ զաւագերէց սուրբ եկեղեցոյս զաէր Թուճայ. եւ զՅովան-
նէս փրկիստփայ. զՍտեփաննոս որդի Աստուա-
ծատուր փրկիստփայն որ ի վերոյ յիշեցաք. եւ զմիւս Ստեփաննոս որդի Ատոմ քահա-
նայն. եւ Ձաքարիս որդի Ստեփաննոս քա-
հանայն. եւ զԹուճայ որդի Ծերունին, զՄկրտիչ, զՍտեփաննոս, զՅովհաննէս, զՄկրտիչ, զՎարդան...: Ես Մուրատոս որդի Անպէտին տուի զսուրբ Աւետարանս Ոստան քաղաքի կաթողիկէ եկեղեցոյն սուրբ Ստեփաննոսի ընծայ» (Հ. Ն. Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2670. Մուրատի մասը առանձին յիշա-
տակագրութիւն է):

Գ. Գծագրեցաւ սուրբ Աւետարանս... ի խնդրոյ երկուց հարազատաց Ծերուն արե-
ղային սուրբ Վարդանայ Հերպետին... (Նո-
տարք, էջ 133 ուր եւ ծն. 2):

Ե. 1446ին զրուած Յայտաւորքի մը յի-
շատակարանին մէջ կայ՝ «Յիշեալիք առաջի Քրիստոսի զանարժան եւ զմեղաւոր ծանայս զՍտեփաննոս զրիչ...: Յիշեալիք... զստա-
ցող սուրբ զրոցս զխառակրոն եւ զսրբասէր Մկրտիչ կրօնաւորն եւ զեղբայր Յովանէս, զոր ետուն զրեւ զսուրբ զիրքս... եւ եղին ի դուռն սուրբ Վարդան զօրավարին, որ է յերկիրն Ռչտունեանց հանդէպ զեղին Գաւաշի (Հմմտ. Բնաշխ. Բորն., էջ 499) յիշատակ բարի հոգևոց իւրեանց...: Արգ ես... Մկրտ-
տիչ անուամբ միայն կրօնաւորս... տուի զսա ընծայ եւ նուէր ի զերահանգ ուխտս որ յա-
նուն սուրբ Վարդան զօրավարին» (Նոտարք, էջ 152) 58:

Դ. Սարգիս քահանան աւետարան մը նո-
րոգած կը գնէ՝ «Ի բնիկ ուխտ իւր ի սուրբ Վարդան յիշատակ իւր» (1639ին, Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 782):

58 Նոտարքի հեղինակը կը հրատարակէ 1460ին որդի յիշատակարան մը, որ սակայն զրուած է միայն «Ի գոսն սուրբ Վարդանայ» (Հմմտ. անդ, էջ 197):

31. ԲԱՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ոստանի մօտ ծովահայեաց վանք մըն է Ս. Աստուածածին Քարի, որ զուցէ նոյն ըլ-
լայ Սպիտակ կամ Սիլվուս վանքի հետ եւ որ Աթանանց գիւղի մօտ է (Հմմտ. անդ), վասն զի կը գրուի Գիր օրհնութեան 59՝ «Ի սուրբ խաչն Աղթամարայ եւ ի Քարի սուրբ Աս-
տուածածնի ի սուրբ տաճարէս... զեղին Աթանանայ եւ ընակչացն նորա մեծին եւ փո-
քու հրամանաւ Տէր Ձաքարիս Հայոց կաթո-
ղիկոսին» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 314—316):

Վանքիս մէջ 1432ին կ'աւարտի Աւետա-
րան մը՝ «Աւարտեցաւ ի յանապատին, որ Քար կոչի ընդ հովանեաւ սուրբ Աստուա-
ծածնիս եւ առ յոտս Յակոբ հրեշտակալի ծո-
նաւորի ձեռամբ Սարգիս անպիտան ծա-
սայի. յիշեցէք զՄատթէոս քահանայ... քան-
զի զաւետարանիս մաղաղատս ինձ ողորմու-
թիւն արար եւ զհոգեւոր հայրն իմ զՅակոբ արեղայն, որ եղև միթարութիւն եւ հո-
գեւոր ուրախութիւնս յայտ անապատիս... նաև զՅերմիա արեղայն եւ զաէր Ստեփան-
նոսն, որ զաւրինակն շնորհեաց եւ զմիւս Յա-
կոբն... արեղայն եւ զմանկուք անապատիս զՅովհաննէս միայնակեացն եւ զՄարտիրոս կրօնաւորն եւ զհայրն իմ Թաղէոս եւ զմայրն իմ էլմա եւ զեղբարքն իմ Բախտիյար, Մար-
տիրոս, Գրիգոր, Գուլիյար, Արղութա, Բիր-
թէլ. Թվ. ՊՁԱ» (Հ. Ն. Ակիւնեան, Հաւա-
քունն Յիշատ. Երեւան, Թ. 123):

Իսկ 1444ին Քարի Ս. Աստուածածնի 60
մէջ կը գրուի Գանձարան մը, որուն երկար
ու կարեւոր յիշատակարանն է՝

«... Եւ արգ զրեցաւ սա (Գանձարան) ի
մայրաքաղաքս Ոստան ի դուռն Քարի սուրբ
Աստուածածնին, որ է ծովահայեաց ընդ հո-
վան(ե)աւ սորին, եւ սուրբ Ստեփաննոսի
Նախավկային եւ սրբոյն Սարգսի զաւրավա-
րին, որ սակաւ հետի: Եւ արգ զրեցաւ սա ի
Թուականիս Հայոց ՊՂԳ (1444) ի հայրապե-
տութեան Տեանն Տեանն Ձաքարիայի...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զսպասաւոր
եւ զերախաւորք սուրբ ուխտիս զիմաստուն
եւ զհանձարեղ եւ զմեծահամբաւ բարունին
զՅովանէս, եւ Ստեփաննոս հէրպետ եւ զԱս-
տուածատուր վարդապետն եւ զԱրքահամ

59 Գիր օրհնութեան կը արուի, որովհետեւ Ս. Աստուածածնի արտ մը «մուրք» կ'ըլլուի (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 314—316):

60 1439ին կ'աւարտի ծառայ մը սյանդ (Նոտարք, էջ 119) եւ 1440ին Գանձարան մը (անդ, էջ 121):

սրբանեալ կրօնաւոր որ առաջնորդ եղև
զրոցս որ եւ յայտ ամի փոխեցաւ ի Քրիս-
տոս եւ զՄկրտիչ մահապախն որ մահանուն
Կոչիլընց կոչի եւ զՅովհաննէս կրօնաւորն
եւ զայլ ամենայն հաւատացեալ ննջեցեալքն,
որ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս հան-
դուցեալ են եւ եղեալ ի սուրբ ուխտս Պարզիկի
վանք կոչեցեալ...: Դարձեալ յիշման ար-
ժանի արարէք զայժմու սպասաւորք եւ զգոր-
ծաւորք սուրբ ուխտիս, որ կան ծաղկեալ
պէսպէս առաքինութեամբ...: Նախ եւ ա-
ռաջին զանրիծն հոգով եւ զանարատն մար-
մնով զՅովանէս վարդապետն եւ զսպասաւ-
որն եւ ընտրեալ կրօնաւորն զՄարտիրոս եւ
զՍտեփաննոս կրօնաւոր, որ սպասաւոր եղև
սուրբ տառիս եւ զսրբանեալ կրօնաւորն որ
յայտ ամի ընկալաւ զառաջնորդութիւն սուրբ
ուխտիս...: Եւ զընտրեալքն եւ զգովեալքն
ի մարդկանէ՝ զսրբանունդ եպիսկոպոսքն
զաէր Սիոն եւ զաէր Յովանէս եւ զՅովանէս
եւ զՊետրոս կրօնաւորքն... եւ զհեղահոյի
կրօնաւորն զՅովանէս փակակալն եւ զառա-
քինի կրօնաւորն եւ զԹաղէոս եւ զԹուճա...
մահապախ եւ զՊարոնիլուս մահապախ...
սուրբ եկեղեցեացս եւ զՂազար... զգործա-
ւոր» (Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Նոր-
Բայազիտի, էջ 40—41):

Աւետարան մը 1461ին կը գրուի՝ «յա-
տուածախնամ քաղաքս Ոստան ընդ հովա-
նեաւ Քարի սուրբ Աստուածածնին եւ սուրբ
Ստեփաննոս Նախավկային...» (Նոտարք,
էջ 205): Իսկ 1467ին կը գրէ Աւետարան մը
Կարապետ քահանայ «Ի մայրաքաղաքիս յՈս-
տան ի դուռն սուրբ Աստուածածնին Քարի
որ է ծովահայեաց, ընդ հովանեաւ մեծի
սուրբ Ստեփաննոս Նախավկային...» (Նո-
տարք, էջ 231. Հմմտ. Հանդէս Ամսօրեայ,
1925, էջ 258):

32—33. ՕԴԷԼ ԵՒ ԳՈՍԻԻ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԵՐԸ

Փիկանց զիւղի արեւմտակողմը Վանայ
ծովի եզերքը կը տեսնուին «Օդէլ վանք» ա-
նուն աւերակ զիւղի մը կիսակործան շէն-
քերը: Այս զիւղի մասին կը պատմեն թէ իր
անունն առած է հոս եղած եօթն վանքերէն
եւ թէ այս բոլոր վանքերն ալ ժամանակին
չէն են եղեր, ինչպէս Գոմքի Ս. Գէորգի
վանքը, որ անոր մօտերն է (Հայրենիք, 1887,
Թ. 2254—2255, 2231 եւ Արեւելք, 1887,
Թ. 952):

ՎԱՆ-ՏՈՍՊԻ ՎԱՆՔԵՐԸ

Վան-Տոսպ զաւար կը տարածուի Բզնու-
նեաց լճի արեւելեան կողմը սրողարեր դաշտի
վրայ եւ ունի 40 անդղ. մզոն շրջապատ
(Մուրճ, 1903, Թ. 6, էջ 30): «Ինչպէս Հա-
յաստանի ամէն կողմերում, նոյնպէս եւ Վան-
Տոսպ զաւարի սահմանի մէջ Հայոց վան-
քերը, որոնք Վասպուրականի այս մասում
բազմաթիւ են, զրաւում են երկրի ամենա-
լաւ տեղերը՝ հաստատուած լինելով ընդ-
հանրապէս ջրաշատ ձորերի բերան կամ լե-
րանց լանջերին զիւրին վայրերում» (Անդ,
Թ. 8, էջ 34):

1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ Ի ԲԵՐԳԱԿ

Բերգակ անունով քանի մը զիւղեր¹ կան
Վասպուրականի մէջ: Տոսպի Բերգակ զիւ-
ղին մէջն է Ս. Աստուածածնի վանքը, որ
այժմ աւերակ է: Կործանած է Վանի տիրա-
հանակ երկրաշարժին հետեանքով (Հմմտ.
Առ. Դաւրիժ. Պամ., էջ 492 եւ Արձուի Վաս-
պուրական, 1859, Գ., էջ 63):

2. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ

Վանի դաշտի հարաւ-արեւելեան կողմը,
քաղքէն զրեթէ մէկ ժամ հեռու, Կոտուպաշ
կամ Սուրուպաշ հայաբնակ զիւղի մերձ,
բլուրի մը զապաթին կառուցուած է Ս. Սաշի
վանքը (Շէրենց, Սրբավայրեր, էջ 46—47,
Ազգր. Հանդ., ԻԱ., 1911, էջ 85 եւ Մուրճ,
1903, Թ. 6, էջ 39):

Վանքը կը բաղկանայ եկեղեցիէ մը, մա-
տուռէ մը, դաւիթէ մը եւ քանի մը սենեակ-
ներէ: Եկեղեցին 9 մետր երկար, 5½ մետր
լայն եւ զրեթէ 12 մետր բարձր է: Անտաշ
քարերով շինուած է եւ ստանց սիւնի, միայն
թէ ունի երկու հատ բաւական յառաջացած
որմնասիւններ, որոնց վրայ կը բոլորուին կի-
սարոյր կամարներ՝ կրելու համար ութան-
կիւնի եւ փոքրիկ զմբէթը, որ օժտուած է
չորս պատուհանով: Կողակը բոլորակ է եւ
կամարակապ: Ունի արեւմտեան կողմը դուռ
մը եւ երկու նեղիկեկ ու երկնիկեկ պատուհան:
Դրան կամարակալ բարին վրայ արձա-
նադրուած է՝

¹ Տարբերունեաց Բերգակ զիւղին մէջ 1298ին եւ 1306ին Յովսէպ կը գրէ Երկու աւետարան (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 148—149, Լուծայ, 1903, Թ. 5, էջ 59):

«Շնորհօք եւ ողորմութեամբ եւ աջովն ամենակալի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շինեցաւ լուսազարդ եկեղեցիս, որ յիսուսական քառաթեւ սուրբ Խաչին ի թւին ՌՃԾԸ (1709) ի հայրապետութեան ՏեառնԱղէքսանդրի օգնութեամբ մայրաքաղաքիս Ստեփանոս վարդապետին սուրբ զիտեն ի վանքս հրամանաւ աշխարհիս զօրվաթաւորաց եւ մեծամեծաց որ զեկեղեցոյս շինման պատճառեղեն, դպարիսպն եւ զխաչերն նորոգ(եցին), յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք» (Ազգ. Հանդ., 1911, էջ 87):

Արեւելեան պատին վրայ կայ՝ «Գերամեծար եւ հանդիսապէս նորոգեցաւ սուրբ սեղանս Ս. Լուսաւորիչ ի վշտաշատ ժամանակիս ձեռամբ հեղահոգի մէլիք Պարսամին, յիշատակ բարի թվ. 22 (1321)» (Անդ, էջ 87):

Իսկ եկեղեցոյ պատի մէջ զրուած տապանաքարի մը վրայ կայ՝ «Թվիս 245 (1215) Այս արձան յիշատակի գերահարաչ եւ պանծալի աւեակ արեամբ Քրիստոսի կանգնեցի եւ հայր Խաչիկ ի վերայ Գրիգորի, որք երկրպագանէք յիշ. ի Քրիստոս» (Անդ, էջ 86—87):

Եկեղեցոյ հարաւային կողմը կայ թագակապ եւ անսին մատուռ մը՝ նուիրուած Ս. Գէորգի: Ասոր արեւմտեան դրան կամարակալ քարին վրայ արձանագրուած է՝ «ՌկԳ թւին (1614) շինեցաւ սուրբ իաշս Ս. Գէորգ, Ս. Սանդուխտ ձեռամբ մահգասի Խանանց Ղարիբջան յիշատակ իւր հողւոյն եւ իւր ծնողացն եւ իւր կողակցին եւ որդւոյն Թովմին Դինանց, Թովմ որդիք Մինասին եւ Մարհասին եւ եղբարն Յովանէսին, կուղակցոյն, հաւերդարս որդւոյն Սարուխանին, Սարուխանի որդիքն Գաթին եւ Սաֆարն Չարին» (Ազգ. Հանդ., 1911, էջ 87. հմմտ. նաեւ Արծուի Վասպուրական, 1859, էջ 86, բաւական տարբեր):

Իսկ մատրան հին խաչքարի մը վրայ կը կարգացուի՝

«ՌկԳ (1214) թուին այս արձան յիշատակի գերահարաչ եւ պանծալի լուսակիր աշտարակ աւեակ զսեղան սրբութեան ի շնորհաւոր մանկանց եկեղեցոյ: Բան հաւր տէր Ոսկան» (անդ, էջ 86):

Գաւիթը աչքի զարնոց բան մը չէ եւ ձեղունը քանդուած: Անոր գրան վրայ արձանագրուած է 1887ի նորոգութիւնը՝ «Վերստին նորոգեցաւ յարկս սրբութեան դարպասիս ձեռամբ Նորայ վանցոյ Գրիգոր

մեղապարտ արեղայիս, վեց ամ ծառայ անպատին աշխատեցի, սուրբ ուխտս դարպասի քանի՞ տեղն շինեցի ձեռնութեամբ ազգիս. աղաչեմ ի ձեռնը եղբարք յիշեցէք մի ողորմիւ 1887 թ.» (Ազգ. Հանդ., 1911, էջ 37—38):

Ս. Խաչի վանքը շրջապատուած է պարիսպներով՝ դայն թշնամիներու յախտակութիւններէն եւ ոտնձգութիւններէն զերծ պահելու համար:

Անոր հնաչէն զրուութիւնը ենթադրել կուտայ թէ՛ շատ հին հաստատութիւն ըլլալու է եւ դարերու ընթացքին ստէպ նորոգութեան կարօտ մնացած ու ցանցառ անգամ վերաշինուած (Մերախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 240—241, հմմտ. նաեւ Բնաշխ. Բաւարան, Բ., էջ 146): Աւանդութեան համաձայն, որ 1802ին գրուած կոնդակի մը մէջ ալ մուտք գտած է, Ս. Խաչ վանքը հիմնուած է Ս. Թադէոս առաքեալէն Ս. Աստուածածին անունով, սակայն յետոյ Ս. Խաչ կոչուած է Հոսիփոսիմեան կուսաններու ունեցած Ս. Խաչի մատուռին այս տեղի դադարումէն (Արծուի Վասպուրական, 1859, էջ 86—90): Մեր Մատենադարանի Յայրավարքներէն մէկուն մէջ նշանակուած է՝ «Եկին (Հոսիփոսիմեաններ) ի դաւան Տոսրայ, ի դաշուն Վանայ, ի յոտն Վարազայ... ի վայելուչ վայրի, որ եւ նոյն տեղին կոչեցաւ սուրբ Խաչ եւ այժմ ստի Խուրուպաչ» (Տաշեան, Մայր Յուցակ, էջ 63):

Ս. Խաչի վանահայրներէն շատ քիչերուն անունը հասած է մեզի: Անոր առաջնորդներէն եղած է գուցէ՝ «Պսակն ամենայն զիտական եւ վարժ վարդապետաց» Ստեփանոս Տիրացու (ԺԲ. դարուն), որ կաթէն Տէր Սարգիս եպիսկոպոսը «ընտրեաց եւ կացոյց իւր փոխան եւ տեսուչ անապատիս Ս. Խաչի» (Հայրապատում, Բ., 465—468), բայց կարծեմ այս տեղ Ս. Խաչ ըսելով աւելի Վարազի Ս. Նշանի վանքը հասկնալու է (հմմտ. Տաշեան, Մայր Յուցակ, էջ 334 եւ Չարհանէլիան, Պատմ. Հայ դպրութեան, Վենետիկ 1897, Ա., էջ 703): Կարճ ժամանակով առաջնորդութիւն ըրած է Չարարիս Վանեցի (Բիւզանդիոն, 1902, Թ. 1930):

Թերեւս այս սուրբ Խաչին է որ հաւանօրէն 1252ին Հայրապետ արեղայ Աւետարան մը կ'ընծայէ եւ փոխարէն կ'ընդունի տարեկան երկու պատարագ (Բարխուդարեան, Արցախ, էջ 219):

Փոխ վանահայր եւ ապա վանահայր կը կարգուի վանքիս 1884ին Գրիգոր Նորավանե-

ցին, որ քանի մը նորոգութիւններ կ'ընէ (հմմտ. վերը եւ Արեւելք, 1884, Թ. 214 եւ Բիւզանդիոն, 1901, Թ. 1424):

Ս. Խաչի թեմական դիւղն է Կուրուպաչ: Ունեցած է բաւական կալուած եւ սիրուած է իրբեւ ուխտատեղի (Շէրենց, Սրբավայրեր, էջ 47): Ենթակայ եղած է Վանի առաջնորդարանին (Մերախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 241):

3. ՄԱՍՈՒԱԴԱՐԻ ՎԱՆՔԸ

Սոյն անունով բաւական հռչակաւոր վանք մը կայ Գարեղէնք գաւառի մէջ (Ալիշան, Այրարատ, էջ 47): Պալեան համանուն վանք մըն ալ կը դնէ Վանի նահանգին մէջ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1127): — Պալեան նմանապէս կը կարծէ թէ Կուրուպաչ վանքը «գուցէ Վանայ մէջ ըլլայ» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1083, Կուրուպաչ կամ Հաղարափրկիչ ու Հաղարափրկոց վանքի մասին տեսնել՝ Ալիշան, Սիսական, էջ 487. Մմբատեան, Երնջակ, էջ 377. Սիւրմէեան, Յուց. հայ. Ձեռ. Հաւելակ, Բ., էջ 51 եւն):

4. ԿԱՐՄՐԱՒՈՐ Ս. ԱՍՏՈՒԱԹՄԱՆԻ ՎԱՆՔԸ

«Բազում դասերը նախնի կարի մեծացան Բայց դու յոյժ անցուցեր դեր քան զամենայն Ո՛ր կարմրաւոր հրաշալի: Ղօղեալ ի մենաստան քոյ սուրբ անուան Յալեաց ի յարկս կեանք իմ սպառեցան Ո՛ր կարմրաւոր հրաշալի»:

Այսպէս ողբերուած տաղի մը մէջ Բարդուղիմէոս վարդապետը գովքը կ'ընէր (Արծուի Վասպուրական, 1859, էջ 157, ուր էջ 154 հրատարակուած է վանքին աւետարանին յիշատակարանը) Կարմրաւոր Ս. Աստուածածնի վանքին, որ Վանէն իբր երկու ժամ հեռու է (Արեւելք, 1901, Թ. 4772): Շինուած է Վարազայ եւ Չիաթնուի լեռներու լանջին տարածուած հարթավայրի մը վրայ, Շուշանց դիւղի քովերը (Ազգ. Հանդ., 1911, էջ 77. Մուրճ, 1903, էջ 39. Սրուանձտեանց, Համով հոտով, էջ 62): Ստուգիւ ունի՝ «Վայելչապեղ տեսք ու տեսարան» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 50): Առջեւն են՝ Վանայ լիճը, Այգեստանը, Սիփան, Արտոս եւ Նեմրուի լեռներն իրենց ջրովը, այգիներովը, կանանչութեամբն ու ձիւնովը: Կոչուած է Կարմրաւոր Ս. Աստուածածին, որովհետեւ

աւանդութեան համեմատ անոր կառուցուած տեղը Ս. Աստուածածին Թադէոս Առաքելոյն կ'երեւայ եւ կը հրամայէ հոն վանք մը շինել եւ «անուանեա՛լ զանուն տաճարին Կարմրաւոր, որպէս զիս տեսանես կարմրագրեալ փառօք» (հմմտ. Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 259):

Վանքս ունի եկեղեցի մը, գաւիթ մը եւ 15 սենեակ՝ յատկացուած միաբաններու եւ ուխտաւորներու: Պարսպապատ է:

Եկեղեցին շինուած է հասարակ անտաշ քարերէ: Երկու քառակուսի ամբողջական եւ ութ կիսասիւններու վրայ կը բոլորուին պայտածե կամարները, որոնց վրայ կը բարձրանայ կլոր գմբէթը կոնաձեւ կաթուղիկէով մը: Կողակը կիսաբոլոր է: Կողմնակի խորանները վերածուած են Ս. Յովհաննէսի եւ սուրբ Գէորգի նուիրուած սեղաններու: Ունի քանի մը փոքրիկ եւ նեղիւղ լուսամուտեր: Գաւիթն առանց գմբէթի է եւ երկու ամբողջական ու ութ կիսասիւններով հասարակ շէնք մըն է: Տաճարի երկայնութիւնը եղած է 30 ոտք եւ նոյնքան ալ լայնութիւնը, իսկ դար-

2 Այս աւանդութիւնը պահուած է թղթի մը մէջ, զոր հոս կը հրատարակեմ հատրնոր՝ իր հետաքրքրական բովանդակութեան համար՝ «Ի սուրբ եւ ի փառաւորեալ աստուածազարդ եւ մեծապայծառ եւ հրաշալի եւ հրաշափառ Աղիսասարա եւ երկնաման Կարմրաւորայ Ամէնօրհնեալ Տիրամայր սուրբ Աստուածածնի բազմահարաչ ուխտէս եւ ի սրբոյ զլիակոր Առաքելոյն Պետրոսի եւ Պողոսի հիսաբան խորանացն: Եւ ի սարսափելի սուրբ բեւեռէ ոտից մեր կենարարին: Ի մասնէ քօղի Ամէն երանուհոյ սուրբ Աստուածածնին, որ ամփոփեալ է սրբազան Առաքեալն Քրիստոսի Թագէոս, եւ ի մեռեալ յարոց հրաշալի Կարմիր Աւետարանէ: Եւ ձեռամբ սուրբ Թադէոսի օձեալ զիւսհարած սրբոյ խաչէն... (Կարմրաւորայ վանքն) շինեալ է... ի յերկրիս Վանայ, հանդէպ բերդին յարեւելից կուսէ, զիւրիւ լեռին Վարազայ ի վերայ... բլրոյ միոյ ձեռամբ Թադէոսի սրբազան առաքելոյն... որ երբ ի Հայս... զիւր իւրն եւ զիւրազն աստուածամուխ եւ զբեւեռն աստուածահեղուս եւ զքօղի Տիրամայր Ս. Աստուածածնին... եկն եհաս ի վայելուչ վայրս Կարմրաւորայ... եւ ի զիւրիւն երեւեալ նմա ինքն ամէնօրհնեալ Տիրամայր սուրբ Աստուածածնին (ստէ)... ստտ կառուցես զտաճար անուան իմոյ եւ ստտ ամփոփեալ զվարչամակ զիւրոյ իմոյ եւ զմի բեւեռն ոտից Աստուածորդւոյս եւ անուանես զանուն տաճարին Կարմրաւոր, որպէս զիս տեսանես կարմրագրեալ փառօք»:

Թուղթս կերուած է Բարսեղ եւ Սահակ վարդապետներու կնիքով: Բովանդակութիւնն է՝ վանահայրը կը ծրարէ զայն (ուխար) հիմէն նորոգել եւ այդ պատճառով օգնութիւն կը հայցէ:

Տակը կայ՝ «Գրեալ էր օրհնութեան նամակն օրինակիս ի թուականութեանս Հայոց ԵՃԿԸ (թէ ՌՃԿԸ) ամին երկիրս Վասպուրականի ի մայրաքաղաքս Վան ընդ հովանեալ Կարմրաւոր սուրբ Աստուածածնին յաստիքութեան լուսակազմ սրբոյ տաճարիս Տեառն Յովհաննէսի հոգեւելից արհեպ.ին: Որ եւ նա ինքն զԿարմիր Աւետարան եղեալ էր սուրբ ուխտս յիշատակ հուրոյ իւրոյ եւ ամենայն ննջեցելոց: Ի նմանէ կրկին օրինակեցաւ եւ զայս նամակս ի թ. ՌՄԽԳ յատաճնորդութեան անարժան արեղայիս (Սահակայ?)» (Թօփածեան, Յուց. հայ. Ձեռ. Գաղեան Վրդ. ի Բ., էջ 17):

պար 28 ոտք երկայն և 25 ոտք լայն (Ազգր. Հանդ., 1911, էջ 77 և Արժուի Վասպուրական, 1859, էջ 146):

Կարճրաւորի վանքն ու եկեղեցին դարեւրու ընթացքին քանի մը անգամ նորոգութեան պահանջը կ'ունենան: Թէ կանխապէս ուրիշ առթիւ ե'րբ՝ չենք դիտեր, սակայն 1617ին կը նորոգուի եկեղեցին, ինչպէս հետեւեալ արձանագրութիւնը կը ցուցնէ՝

«Այս է արձան սուրբ Աստուածածնին, զոր ի սմա պատարագի Յիսուս Քրիստոս ի փրկութիւն ազգի մարդկան և և կատարի կարգ հէ՛ զոր վերստին նորոգեցաւ ձեռամբ Աստուածասէր խաւճայ Զիրաքի: ԶՄիրաքն յիշատակ իւր հզ. և ճնողացն հօրն մէլիք Սարգսին, մօրն Զանալին և եղբարցն Գրիգորին, Մելիքդատին, և և խնայ Զիրաքին կողակից Սոլթին, որդւոյն Ալխասին, Միրզին, և հօրեղբոր Սոնայ Շիրաքին ի թուաբերութեան հակադեան սեռիս Հայոց ՌԿԶ (1617) առաջնորդ սուրբ ուխտին Վարդայ Մարտիրոս վարդապետն սուրբ ուխտիս Զաքարէն շինեցի ձեռամբ խաւճայ Միրաքի Մելքն որ սուրբ յիշատակ իւր հոգն և և իւր ծնաւզաց հաւրն Մկրտչին մաւրն Սաֆար մէլիքին և եղբաւրն, զՍաչատուրն, Զիրաքն, Աստուածատուրն և որդւոցն Միրունին, Ամիրզատն, տէր Ըստեփաննոսն, զՍաչայ Աւետին և Զիրաքին» (Ազգր. Հանդ., 1911, էջ 77—78. հմմտ. Մուրճ, 1903, էջ 39): Արժուի Վասպուրականի մէջ (1859, էջ 146) արձանագրութիւնս կայ այսպէս՝ «Ի թուականութեան հայկազեան տուժարին ՌԿԳ (1615) յառաջնորդութեան ուխտիս Մարտիրոս վարդապետին, սուրբ ուխտս շինեցաւ ձեռամբ խնայ Միրաքի Մելքնին. յիշատակ իւր հոգւոյն և ճնողաց հաւրն Մկրտչին մաւրն և եղբաւրն Սաչատուրին Զիրաքին...»:

Եկեղեցին հիմէն կը նորոգուի 1779ին, ինչպէս անոր արեւմտեան զրան վերեւ գրուած արձանագրութիւնը կը վկայէ՝ «Ի թուականութեանս հայկազեին ՌՄԻԸ (1779) ամին նորոգեցաւ տաճարն ի հմէ կարճրաւոր սուրբ Աստուածածնի կաթողիկէ եկեղեցին ձեռամբ մեծի Բաղասարի նաւիրակի էջմիածնի և առաջնորդ Վան քաղաքի յիշատակ իւրն և ճնողի և փրկութեան հոգւոց նայն, մեղաց մուրճակն ջնջեցին, որք հանդիպեք առք սորմի» (Ազգր. Հանդ., 1911, էջ 77 և Արժ. Վասպ., 1859, էջ 146):

Սոյն տաճարը «խախտու կացեալ յե-

րերի» կը նորոգէ Իգնատիոս արքեպիսկոպոս 1866ին՝

«Չքնաղ այս տաճար ի բարձր սոյն բլրի, Գրաւէ գանուս սուրբ Աստուածածնի, Որոյ արտաքին բովանդակ շինուած Հիմնովին խախտու կացեալ յերերի. Տէր Իգնատիոս արքեպիսկոպոս Դէտ Վասպուրականս կացեալ դաւառի ի հիմանց քակեալ նորոգ նորոգեաց Զարտաքին շինուածս որ և ի կարգի Յամի Տեառն 1866 ի Մայիսի 16»:

Իսկ վանքին պարիսպը կը նորոգուի 1817ին՝ «Նորոգ նորոգեցաւ պարիսպն սուրբ վանքին Կարճրաւոր կոչեցեալ սուրբ Աստուածածնին կամօք և ձեռնտուութեամբ իշխան պարոն Դարասաֆարենց Յակոբ աղային ՌՄԿԶ (1817) թվին» (Ազգր. Հանդ., 1911, էջ 78):

Կարճրաւոր վանքը, ինչպէս աւանդութիւնը կը հաղորդէ, շինուած է Թողէոս առաքեալին Տիրամօր կամքին համեմատ (հմմտ. վերը և Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 197) և սակայն շատ ուշ առեւնեւրէ անոր մասին պատմական տեղեկութիւններ ունինք³:

Զարարիա արեղայ 1511ին կ'աւարտէ Աւետարան մը՝ «յերկիրս Վասպուրական ի մայրաքաղաքն Վան կոչեցեալ ընդ հովանեաւ Կարճրաւոր սուրբ Աստուածածնայ վանից... և եղ(ի) ի յիշատակ ի դուռն Կարճրաւոր սուրբ Աստուածածնայ վանիցն» (Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վրդ.ի, Ա., էջ 8. հմմտ. և Վարադ):

Հ. Պոտուրեանի ծանօթ է յիշատակարան մը, որուն համեմատ 1601ին Կարճրաւոր կամ Շուշանց վանքի մէջ կ'արտադրուի Յայրամաւոր մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակարանաց, 1601):

Սիմէոն կաթողիկոս 1764ին վանքիս վրայ եպիսկոպոս կը ձեռնադրէ Վանայ առաջնորդ և էջմիածնի նաւիրակ անուանի Բաղասար վարդապետը և անոր բացակայութեանը վէբի կը կարգէ մահտեսի Յովհաննէս (հմմտ. Արարատ, 1876, էջ 172. Դիւան, Գ., էջ 117—118, 134, 483—484 և և և և): Սոյն Բաղասար ինչպէս վերի արձանագրութեանէն յայտնի է կը նորոգէ եկեղեցին: Բաղասարի հա-

³ Պոթ թուին կը յիշուի «Ատոմ միայնակեաց յԱստուածածնին ուխտէն Վանայ» (Զարբհանէլեան, Պատ. հայ. գրութեան, Բ., էջ 150. տե՛ս Վարադ):

մար, որ եռանդուն անձ եղած է, կը կանդնուի խաչքար մը՝ «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս առ Աստուած վասն սուրբ էջմիածնայ նաւիրակ Բաղասար վարդապետի որ էր առաջնորդ Վանայ» (Ազգր. Հանդ., 1911, էջ 79): Վանքիս բարորութեան նպատակներէն եղած է նաև Իգնատիոս վարդապետ (արքեպիսկոպոս) որուն շինարարութիւնը կը պատմուի 1866ի արձանագրութեան մը մէջ, զոր յիշատակեցինք: Իր օրինակին հետեւող է շինարարութեան մէջ Ստեփան Վ. Տէր Սարգիսեան (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 197):

Իսկ երեսուն տարի սոյն-տեղ պաշտօնավարած է Բարթողիմէոս վարդապետ, որուն տաղանքարին վրայ դրոշմուած են սա զնահատական տողերը՝

«Կարեկից անցորդ, դարձիւր յայս տապան՝ Չննել թէ ոյր է այս զի անկեղան. Հայր Բարթողիմէ ուշիմ զիտնական Բնիկ Պօլսեցի ճնունդ պատուական, Վարդապետ բարի լուսաւորչական Եւ զայ հասանէ ի քաղաքս Վան, Զամս երեսուն զայս սուրբ մենաստան Շահեալ պաշտօնի վերատեսչական Հասեալ ցհասակ ալեաց ձերութեան Կնքեաց զկեանս իւր գործովք բարութեան 1862 Դեկտ. 8»:

Այս շիրմի խաչքարին շուրջը կայ՝ «Ի սոյն ժամանակի վերակացու էր Դաւալեան Սարգիս ի մէջ սուրբ ուխտիս: Ի ժամանակս Իգնատիոս արքեպիսկոպոսի շինեցաւ տապանս արեւամբ պա Մարդիկեանց չորեք եղբարց. Մհ. Եղիազար, Մհ. Յակոբ, Մհ. Սարգիս և Յոհաննէս, սիրելի որդեկիրք Բարթողիմէոս վարդապետին 1867 Ապրիլ 6» (Ազգր. Հանդ., 1911, էջ 78—79):

1884ին տեղապահութիւն կ'ընէ Ղեւոնդ Փիրքալմեան, «Նօտարք»ի հեղինակը (Արեւելք, 1884, Թ. 214), անկէ յառաջ ալ Աթանաս Վանեցի (Նօտարք, էջ 190):

Վանքիս մէջ թաղուած է անոր ուրիշ մէկ շինեցողը Յակոբ եպիսկոպոս Սիլվանցի, որուն շիրմին խաչքարի վրայ կայ՝

«Ես եպիսկոպոս Յակոբ Սիլվանցի. Սաչս կենսատու պարձանք Պօղոսի»:

⁴ Խաչքար մըն ալ տնի վարդան վարդապետ՝ «Յիշատակ է սուրբ խաչս վարդան վարդապետին» (Ազգր. Հանդ., 1911, էջ 79):

Յամենայն ընթացս վաղանցուկ երկրի. Ի վերայ ուսոցս որ միշտ կրէի Յայր մ շիրմիս վրայ վկայ թող կանգնի. Որ մեծ յուսով ևս զայն պաշտեցի. Յամի Տեառն 1893 Յունուարի 18»:

Իսկ շիրմինաքարի վրայ արձանագրուած է՝

«Ութսուն և ութ ամաց հասակի, Յակոբ սրբազան բնիկ Սիլվանցի, Ահա աստ հանգեաւ յանոյս տապանի, Կայ միշտ սպասու դալտեան Փրկչին Յամի Տեառն 1893 Յունուար 18»:

Գէջ ժամանակ (1895—1896 տարիները կ'ակնարկեմ) վանքին առաջնորդութիւնը կը յանձնուի Յակոբոս վարդապետ Շաղբաշլեանի, որ սակայն իր խոհեմութեամբն ու ձեռնէրեցութեամբը կրցաւ վանքին տնտեսականը բարւոքել: Նա ստիպուեցաւ Կարճրաւորէն հեռանալ Բաղէշի առաջնորդութիւնը ստանձնելու համար, և սակայն կարճ ժամանակէն տարադրուեցաւ: «Իսկ Կարճրաւորայ վանքի ամէն կնյքն ու սրբութիւնները յափշտակելուց վերջ շինութիւնները բոլոր սյրուեցան բացի սրբազան տաճարից: Մենք բազմաթիւ ժողովրդով ամերիկացիներ յանից տեսնում էինք այն բոլոր խժոժութիւնները, թէ ինչպէս այրուած էին սրբավայրն, քրում էին նորա տաւարն ու ոչխար» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 51):

Ետքէն 1898ին հոս կը բացուի որբանոց-դպրոց հարկաւոր եղած նորոգութիւններէ վերջ (Արեւելք, 1899, Թ. 4041 և 1901, Թ. 4774. Բիւզանդիոն, 1898, Թ. 497, 560 և 1899, Թ. 811):

Կարճրաւորայ⁵ վանքը Վանի առաջնորդութեան (Վարդայ) ներքեւ եղած է և ունեցած է շատ բերրի և արդաւանդ հողեր և նաև թեմական դիւաններ (Ազգր. Հանդ., 1911, էջ 80 և Շէրենց, Սրբավայրեր, էջ 50):

5. ԿՈՒԱԼՈՒՍ ԱՍՏՈՒԱՅՈՒՆԻ ՎԱՆՔԸ
Ծանօթ է վանքս այս յիշատակարանէն՝ «Փառք... և արդ ևս անպտուղս ի բարեաց... Աւետիս արեղայ... կատարեցի

⁵ Հոս գտնուած են նաև բեւեռագրութիւններ (հմմտ. Արժուի Վասպուրական, 1859, էջ 148): — Այս տեղ Յովհաննէ կաթողիկոսը Ս. Խաչի Գրիգոր առաջնորդը ծայրագոյն վարդապետ կ'ընէ (Բիւզանդիոն, 1901, Թ. 1424): — Վանքիս պատկերը տեսնել՝ Գեղունի, 1905, էջ 67 և Բնաշխարհիկ Բառարան, Բ., էջ 334):

գուրբ աւետարանս... յաստուածաբանակ ուխտի վանքս որ կոչի Կաւարու ընդ հովանեաւ սուրբ Տիրածին Աստուածածնի, որ յանուն սուրբ Կարապետին եւ սուրբ Սաշին է կառուցեալ ի յառաջնորդութեան տէր Սահակ եպիսկոպոսին եւ է ինքն բարի եւ հնազանդ օրինացն Աստուծոյ. եւ վանից միաբան տնտես մահտասի Աղ... որ է մարագութ խնամ տանի ի վերայ մեղաւորիս, հալաւ վլանալ, թափելով եւ կերակրելով Գրիգոր ամուսնավար, որ աշխատէ բազում ջանիւ ի դուռն Աստուածածնին եւ Դաւալին, որ է աւելածու տան եւ դռան... թուին ՊԾԹ (1410)» (Նօտարք, էջ 37—38, որ հեղինակը ծն. 1 կը գրէ՝ «Վերոյիշեալ Կաւարու վանքն էր ի թուոյ Վանայ վանօրէից, յորոց բազմաց այժմ հետք հազիւ տեսանին ուրեք ուրեք» (Հմմտ. եւ Պալեան, Բիւզանդիոն, 1900, Թ. 1158) :

6. ԿԵՆԳԱՆԱՆԻՅ ՎԱՆՔԸ

Վանի հարաւակողմը — կէս ժամ հեռու — կը տեսնուի Կենդանանց կամ Կենդանեաց գիւղը⁶, ուր կը գտնուի հաւանօրէն Առաքել Դաւրիթեցիի յիշատակած Կենդանանից վանքը, որ Վանայ մեծ երկրաշարժին կը կործանի (անդ, զլ. Լէ. հմմտ. Բնաշխ. Բօրն., Բ., էջ 363) : Ծանօթ է Կենդանանից Քօչահան Ս. Աւետարանը (Շէրենց, Սրբավայրեր, էջ 48—49) :

7. ԿՈՒՌԵԿ ՎԱՆԻՅ ԿԱՍ ԾՈՎԱԶԱՅԱՅ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Կոնկու սուրբ Աստուածածնի վանքը հիմնուած է՝ «Վանայ ճիշդ հարաւը, երեք ժամու հեռաւորութեամբ Ծովաստան գիւղի արեւմտեան կողմը, բլուրի մը գագաթը» (Արեւելք, 1893, Թ. 2768) . Արտամետի մօտ, օժտուած եղական գիրքով ու տեսարանով (Շէրենց, Սրբավայրեր, էջ 45) :

Ս. Տիրամօր նուիրուած մենաստանս համանուն վանքերէն զանազանուելու համար կոչուած է Ծովահայեաց սուրբ Աստուածածին, որովհետեւ զկալի Վանայ ծովակը կը նայի : Իսկ Կոնկուի վանք յորջորջումը զոյգ յուզիչ զէպերու կը պարտի : Քահանան

⁶ Վան քաղաքէն քիչ հեռու է Աւանց կամ Աւան գիւղը, որ ունէր Ս. Յովհաննէս անունով եկեղեցի մը, որուն հովանիին ներքեւ կը գրուին ժողովածու մը եւ Աւետարան մը (Conybeare, Cat. arm. Brit. Mus., էջ 269 եւ Սմբատեան, Երնջակ, էջ 14. հմմտ. նաեւ Մերախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 202—210 եւ Արծ. Վասպ., 1859, էջ 262—264. հմմտ. նաեւ Ալի-նեան շ. ն., Գաւազանագիրք, էջ 50—51) :

պատրաստ է պատարագ մատուցանելու եւ յանկարծ տեղեակ կ'ըլլայ զինիին պակասութեան : Սոսկը կը յուզէ իր հոգին եւ աղօթքով երկնքի օղնութիւնը կը հայցէ : Եւ ահա կաթողիկէին լուսամտէն ներս կը թռչի կոռնիկ մը — կտուցին մէջ խաղողի մարգարտայեռ ողկոյզ մը : Քահանան խնդու-մերես կ'աւնու ողկոյզը Ս. Զոհր մատուցանելու համար, իսկ կոռնիկը սրաթեւ կը հեռանայ (Արեւելք, 1893, Թ. 2768. Աղգր. Հանդ., 1911, էջ 85. Բաֆֆի, Կայծեր, Բ., էջ 175. Շէրենց, Սրբավայրեր, էջ 45. Մուրճ, 1903, Ը., էջ 49) : Ուրիշ զէպք մը : Հունձքի ժամանակ է : Վանքին հնձուորներուն համար կաթսային մէջ կերակուրը կը պատրաստուի : Եւ ահա աւստի կոռնիկ մը օղին մէջ : Երջաններ կ'ընէ ջրային, կը կանչէ աղարարող ձայնով : Զինքը հասկցող շրջալուռն յանկարծ ինքզինքը կաթսային մէջ կը նետէ : Մարդիկ կը փութան զինքը ազատելու եւ կաթսային մէջ կը նկատեն խոշոր օձ մը : Այն ատեն հասու կ'ըլլան որ՝ կոռնիկն ինքզինքը զոհեր էր զանոնք թունաւորումէ փրկելու համար եւ՝ «Այս զէպքից յետոյ այս Ծովահայեաց սուրբ Աստուածածնի վանքը վերակոչուել է Կոնկան վանք» (Աղգր. Հանդ., 1916, էջ 46—47) :

Կոնկու վանքը ունի քանի մը սենեակ, եկեղեցի մը եւ գաւիթ մը, որոնք պալատով շրջապատուած են : Եկեղեցւոյն շէնքը հաստատուն է եւ անտաշ քարերով շինուած : Ունի երկու փոքր ու նեղ պատուհան եւ դուռ մը՝ արեւմտեան կողմը : Իսկ գաւիթը շատ հասարակ շինութիւն մըն է, սակայն անոր սիւներու տակ գտնուած քարէ գեղեցիկ խարիսները կը ցուցնեն թէ ժամանակին շատ աւելի լաւ շինութիւն մը կար հոն : Արդէն ծանօթ է որ՝ Վանի 1648ի բազմաւեր երկրաշարժին ենթարկուած է եւ այս վանքը, բայց ապա վերանորոգուած (հմմտ. Առ. Դաւր., էջ 492) : Կաւանդուի թէ հին վանքը «առաքելաշէն եղած է, որ 300 տարուան մօտ աւերակ մնալէն ետքը Արտամետի Դաւիթ եպիսկոպոս Նարոյեան եւ Պաղտասար վարդապետ Զիֆիրեան՝ երկու ջանասէր կղերականներն իրարու հետ միացած կը վերանորոգեն զվանս ասկէ 150—160 տարի առաջ (այն թուականն արդէն անտեսանելի չէ) . ահա այսպէս կ'աւանդեն ձերանիք» (Մերախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 227—229) :

Բնութենէն եւ մարդկանէ քանի մը անգամ աւերած մենաստանս Վասպուրական-

ցիներու սիրած մէկ ուխտավայրն եղած է եւ ընդունած բաւական հողեր իրբեւ նուէր : Աղթամարի գերիշխանութեան ենթարկուած է, բայց լաւ չէ տնտեսուած : Միայն Մխիթար վանահայրը (Գիթ անուանուած) կրցեր է զայն իր օրով լաւ տնտեսել :

Աւերուցներու ենթարկուելով հանդերձ վանքս⁷ ունեցած է երկար կեանք եւ սակայն զրականութեան համար մնացած է ամուլ :

8. ՀԱՅԿԱՎԱՆԻՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Հայկավանք կամ Հայկավանից սուրբ Աստուածածին եւ կամ Եօթն խորան կը գտնուի Վան բերդաքաղաքէն հազիւ տասը վայրկեան հեռու (Շէրենց, Սրբավայրեր, էջ 29) : Սաշիկ Լեւոնեանի կարծիքով Հայկավանք ըլլալու էր նախապէս Հանգավանք, այսինքն՝ հանդուցեղոց վանք կամ օթեւանք (Աշխատանք, 1914, Թ. 24) որովհետեւ սկիզբերը պարզապէս եկեղեցի էր⁸ եւ հոս կը բերէին հանդուցեղները եւ անոնց հոգեհանգիստը կը կատարէին : Նախապէս շատ հոյակապ եկեղեցի մը եղած կ'երեւայ եւ օժտուած քարակերտ կամարներով ու եօթը խորանով : Ետքէն անոր մօտ բնակարաններ շինուած են եւ անոնց մէջ բնակած է մեռելաթաղ միաբանութիւն մը, որ կը ջնջուի (անդ, Թ. 24 եւ 25) : Ժի. դարուն զրուած աւետարան մը

⁷ Այս վանքի մասին բացի վերոյիշեալ տեղեքներէ գրած են նաեւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 144, Մարգարեան, Տեղագրութիւնք, էջ 256, Արեւելք, 1901, Թ. 4802 եւ Փորձ, 1879, IV, էջ 61) :

⁸ Վանի եկեղեցիներէն է նաեւ Ս. Վարդան, որուն հովանիին տակ շատ մը ձեռագիրներ գրուած են : Ահա հոն գրուած զբքի մը յիշատակարանը՝

«Գրեցաւ սա ծախիւք սուրբ եւ երջանիկ եւ ընտրեալ կրանաւորի Տիրացուի, զպրապետ եւ առաջնորդ եւ տէր սուրբ ուխտին սուրբ Վարդանայ որ ի Վան քաղաքի... : Եւ ես ամենամեղս եւ փղունս ի դրչաց Դանիէլ անարժան եպիսկոպոս գծադրեցի զսուրբ գիրքս մեղսամած մատամբ իմով... : Յիշեմք... եւ զկրանաւոր եղբարքս մեր զՍտեփանոս եւ զԿարապետ... :

Փառք... Աստանաւոր սկզբնաւորեալ աստուածային տառս այս ի թուականութեանս Հայոց 246 ի դառն եւ տարտարոս ժամանակի ի գեղեցիկ եւ յամուր կղզիս Աղթամար կոչեցեալ ի հայրապետութեան Տեան Ներսէսի եւ Տեան Զաքարիայի, ի խնորոյ աստուածարեալ եւ սրբաւէր կրանաւորի Տիրացուի որ է զպրապետ եւ առաջնորդ եւ տէր սուրբ ուխտին սուրբ Վարդանայ որ է ի Վան քաղաքի, որ է իւր սեփական, զոր բազում ծախիւք եւ աշխատութեամբ յարիւնեաց ի նմա... բազում... յարդար վաստակոց իւրոց զնեաց բազում ոխիս յանուն սրբոյն Վարդանայ զի ի նմա հանդիցին նեղածք եւ հիւանդք եւ արտաժտք յազապ քչչկութեան... : Եւ ես ամենամեղս... Դանիէլ անարժան եպիսկոպոս... յանձն առի... եւ կատարեցի զսն մեղսամած մատամբ իմով յըստոյն եւ յընտիր աւրիւնակէ...» (Ալիեան շ. ն., Հաւաք. Յիշատակ., էջմ. 976, Կիւրղի կոչումն ընծայութեան եւ այլ ճառք, Կարինեան, Ցուց. Թ. 749) :

Մարգար դպիրն ազատելով կը դնէ «յիշատակ ի դուռն Հայկավանից սուրբ Աստուածածնի, սուրբ Յարութեան եւ սուրբ Կարապետի խորանացն» եւ կը յաւելու՝ «Աստուած ողորմի ասացէք ստացողի սուրբ տառիս... որ ետ ի ձեռն տէր Յարութիւն սրբանունդ քահանային, որ բազում երկամբք եւ աշխատանօք ի հիմանէ շինեաց զսուրբ տաճարքս ի թվին ՌՃՁ (1731) ամին» (Լալայեանց, Ցուց. հայ. Զեռ. Վասպ., էջ 52) : Վանքիս բակին կենդրոնը թաղուած են Պօղոս եւ Գարբիէլ եպիսկոպոսները (Շէրենց, Սրբավայրեր, էջ 31) :

9. ԶՈՐՈՅ ՎԱՆՔ

Սաղնապատու շատ մօտ է Զորավանքը կամ Զորոյ վանքը, որ ստէպ անոր հետ նոյնացուած է (հմմտ. անդ) :

«Այս գիւղիս (Զորոյ վանք գիւղի) վրայ հովանացեալ բարձր բլրակին վերեւ ամայութեան մէջ անմխիթար կը հեծեն այն Զորավանք բուած հին եւ անուանի վանաց տխուր աւերակներն, որն որ տասներորդ դարու սկիզբներն բոլոր Հայաստանի կաթողիկոսարանն եղաւ... հիմայ այն մեծախառ վանացը տաճարի տխուր աւերակաց հիմունքներն միայն կը նշմարին՝ 32 ոտ լայն եւ 64 ոտ երկայն տարածութեամբ. ամբաշէն պատերու երկու երեսի սրբատաշ պատուական քարերն բոլոր՝ գերի գնացած են. պատի միջուկն մեծակ կանգուն մնացեր է. կրով եւ մանր խիճով այնպէս միապաղաղ ամրացած, որ կարծես թէ տեսակ մը քար է» (Արծուի Վասպուրական, 1859, էջ 207) :

Այսքան է վանքիս շէնքին մասին եղած տեղեկութիւնը :

Վանքիս շինութիւնը կ'ընծայուի Ներսէս Պարթեւի կամ Ներսէս Շինողի⁹. «Գոր շինեալ էր Տեան Ներսէսի» (Սամ. Անեցի, էջ 107, Մ. Ունայեցի, էջ 75 եւ Նաթանեան, Տեղեկապիր Սեբաստիոյ, էջ 34) : Իսկ անոր մօտ գտնուող Հոփիսիմեանց վկայարանին հիմնա-

⁹ Կ'արժէ կարգալ Saint-Martinի դիտողութիւնը. «[Սաղնապատ-Զորոյ վանք] Ce passage me porte à croire que les Arméniens modernes appellent Սաղնապատ Sahnabad ou Սաղնապատոյ վանք Sahnabadoivank'h et qu'ils placent dans le cantons de Dosb est le même, que celui que des auteurs plus anciens nomment Զորոյ վանք Dsoroi-vank'h ou Զորավանք Dsoravank'h (le monastère de la vallée) appelé par notre auteur Dsorabad, qui avait été fondé dans le VII^e siècle par le patriarche Nersès Schinogh et qui était dans le canton de Dosb» (Mémoires II, էջ 466).

գրութիւնը Ս. Գր. Լուսաւորչի (Թովմ. Արժ., էջ 63) :

Վանքս եղած է կաթողիկոսարան : Հոս թաղուած է Գէորգ կաթողիկոս : Յովհաննէս Պատմադիր կը գրէ՝ «Յայտ տեղ(ւոյ) վախճանէր մեծ հայրապետ Գէորգ ի գաւառն Վասպուրական, զոր տարեալ համախումբ քահանայիցն եւ իշխանաց աշխարհին եղին զնա ի քնարանի Զորոյ վանաց որ ի Տոսք մերձ յեկեղեցին, ուր եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւարան իւր եւ զանգան տէրունական խորհրդոյն» (Պամ., էջ 181, հրատ. Դուկասեան, Թիֆլիս 1912) : Նաեւ Յովհաննէս Պատմադիր կաթողիկոսն ալ հոս գտած է յաւիտենական հանդիստը յետ իր խոսովայող կեանքին (Արեւելք, 1901, Թ. 4794, Ազգր. Հանդ., 1911, էջ 82) : Այստեղ սպրած ու թաղուած է եւ Վահանիկ կաթողիկոսը՝ «Վահանիկ կաթողիկոս եկն առ Աբուսահլ... ի Զորոյ վանս եւ անդ վախճանեցաւ. եւ կայր անդ սեղանն պատարագի սրբոյն Գրիգորի եւ զաւագանն եւ զօտին մաշկեղէն եւ հողաթափ սրբոյ Հոսիփոսեանց եւ պերեղտան ներկեալ արեամբ եւ շղարչն որ է զաստիարակ» (Վարդան, էջ 116. հմմտ. Չամչեան, Պամ. Հայոց, Բ., էջ 847 եւ 912. հմմտ. Տաշեան Հ. Յ. : Մայր Յուցակ, էջ 99) : Այստեղ շորս տարի կը մնայ Պետրոս կաթողիկոս՝ «Եւ եղեւ տէր Պետրոս ի Վասպուրական զամս չորս եւ կացեալ էր ի Զայրոյ վանքն» (Մ. Ուսայեցի, Պամ., էջ 75) կամ «Ի ՆՁԶ թվին Հայոց զայրացեալ տէր Պետրոս կաթողիկոսն յԱնի... եւ զնացեալ ի Վասպուրական գաւառ եւ եկաց Գ. ամ ի Զորավանս Սայնանապատի» (Մ. Անեցի, Ժամանակագրութիւն, էջ 107)¹⁰ :

Զորավանքը նաեւ հանդստարան եղած է իշխանականներու : Հոս թաղուած է Համագասուհին, որուն մարմինը «տարեալ հանգուցանեն ի տեղւոյն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոյ Հոսիփոսեանց» (Թովմ. Արժ., Պամ., էջ 63) : Սեդա տիկինը Ապուստոլուանի մարմինը «եղ ի գերեզմանի ի տեղւոյն որում Զորոյ վանք¹¹ տանն՝ ի վերայ գեղղն Ահաւականից» (Անդ, էջ 238) :

¹⁰ Օրբէլեան կը գրէ՝ «Երբեմն բնակէին (կաթողիկոսն) առ Գաղկայ թագաւորին ի Վասպուրական աշխարհի ի վան Զորոյ, ուր կայր սեղանն եւ աթոռն եւ զաւագանն սրբոյն Գրիգորի» (Բ. հար., էջ 18, հրատարակութիւն Ծանազարեանի) :
¹¹ Ծանօթ է «Սարգիս Զորավանից» որ Կիրակոս Վերապետի կաթողիկոսական քնարութեամբ կը գրադի (Նոտարք, էջ 122) :

10. ՅԱՅՆԿՈՅՄԵՐՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Վան քաղքի եկեղեցիներէն եղած է Յայնկոյններու սուրբ Աստուածածին, որ իր մերձ ունեցած է նաեւ վանք օժտուած միաբանական կարգ ու նարքով¹² : Վարդ պատրիկեան շրջանին երեւցած հրեղէն սիւներէն մին ալ հոս իջած է : Վանի մեծ երկրաշարժին այս եւս փաստուած է (հմմտ. Առ. Գաւրիթեցի, էջ 492, գրուած Անդուաներու վանք), բայց Կիրակոս Վրդ. Աւանցիկն նորոգուած : Այլ եւ այլ անդամներ դեռ պէտք ունեցած է վերանորոգութեան եւ նորոգուած է 1762ին, 1803ին, 1860ին եւ 1900ին (Իրւզանդիոն, 1904, Թ. 2482) : «Բայց փոխուելով ժամանակը քայքայում է միաբանական ուխտն եւ հին եկեղեցին անխնամ մնալով փլչում է, միայն քարաշէն եւ ամրակառոյց մնում է պղտիկ տաճարը¹³» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 38. հմմտ. եւ Նոտարք, էջ 72) : Ունեցած բաւականաչափ անդ ու արտ, նաեւ ձիթահան (Անդ) :

11. ՇՈՒՇԱՆԵՑ Ս. ԳԵՐԳՈՐԻ ՎԱՆՔԸ

Համանուն գիւղի մէջ, ներքին Վարազի մօտ է Շուշանից Ս. Գէորգ, զոր գուցէ Սեներբերիմ թաղաւորին աղջիկը շինել տուած ըլլայ (Ազգր. Հանդ., 1911, էջ 77) :

Ս. Գէորգի տաճարն ամուր է եւ կամարակապ : Ծակատի արձանագրութիւնն է՝ «Շնորհաւք բարերարին եւ կարողութեամբ ամենագաւր սուրբ Հոգւոյն վերստին նորոգեցաւ սուրբ Գէորգս ի թուականութեանս Հայոց ՌՂԹ (1650) ի հայրապետութեան Փիլիպոս կաթողիկոսի եւ յառաջնորդութեան մերոյ աթոռոյ Կիրակոս վարդապետի Աւանցւոյ, որ շինեցաւ տաճարս միաբանութեամբ գիւղիս Տէր Յովհաննէսին, Մուրառին, Ախիճանին» (Արժուի, Վասպ., 1859, էջ 149) :

Վանքս այդ թուականին՝ 1650ին նորոգութեան ենթարկուած է, որովհետեւ Վանայ երկրաշարժէն քիչ յառաջ տւերուած ու քանդուած էր (Առ. Գաւր., էջ 492) : Անկէ

¹² Սուր վրոյ կայսիկոսոս ձեանագրուած է Բաղդասար նախկինը (Դիւան, Գ., էջ 483 եւ հմմտ. Կարմրաւոր) :
¹³ 1503ին գրուած անտարան մը Պօղոս սարկաւազ կ'ապրատէ եւ ձեռ գրա ի գուն Յայնկոյններու Տիրամայր ամէնօրհնեալ սուրբ Աստուածածինին» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 617) : — «Նօտարք»ի հրատարակելը կը գրէ՝ «Եր առ երբեմն վանք եւ այժմ եկեղեցի որ կայ շինեալ ի գաւառձաղի վայրի, ի ներքոյ սպասած լերի լեռին, որ Զմբ գրմբ Մալաբոյ կոչէ ի բնակչաց տեղւոյն» (Նոտարք, էջ 72, ծն. 2) :

չառ յառաջ 1393ին հոս կ'աւարտի ձառոյց մը. «Զօրութեամբ Աստուծոյ կատարեցի զսա ի դաննացեալ եւ վշտալից ժամանակի ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ զօրավարին, որ հանգէպ Վարազայ» (Նոտարք, էջ 2) : Դարձեալ 1399ին «Ի գեաւղս Շուշանց ի գունս Ս. Գէորգեայ զօրավարին» կը գրուի ձառնարի մը (Թորոս Աղբար, Բ., էջ 429 եւ Նոտարք, էջ 10) :

Ինձիճեան կը միտի Ս. Գէորգ նոյնացնել Կարմրաւորի հետ (Նոր Հայաստան, էջ 149) : Սիրուած ուխտատեղի եղած է, վասն զի հոս պահուած են Ս. Գէորգի մասունքներէն : Ուխտադնայութեան օրը՝ Ապրիլ 23 (Շէրենց, Սրբավայրեր, էջ 478. հմմտ. Müller Simonis, De Caucase au Golfe persique, էջ 268—269) :

12. ԱՍԼԱՊՈՍԻ Ս. ԳԵՐԳՈՐԻ ՎԱՆՔԸ

«Անկանի ուխտս ի ծաղկալի ձորամէջս սքանչելի լեռին Վարազայ եւ կայ հանդէպ Կողպանից գեղջ եւ կոչի այժմ ի բնակչաց յանուն սրբոյ հօրն մերոյ Լուսաւորչի՝ Ս. Գրիգոր» (Նոտարք, էջ 186, ծն. 1) : Վանէն երեք ժամ հեռի է (Հայրենիք, 1889, Թ. 35) : Շինուած է՝ «Վարազայ լեռան հիւսիսային թեւի վերայ մի ամենասիրուն հովտի մէջ... Եղեմական վայր : Անմահական ջրեր. հինօրեայ անտառ, նորատունկ ծառաստան, բերքատե սակ ծաղկունք, կանանչազարդ մարգագետին, բարձր լեռներ, խոր ձորեր, հովիտների սիւզ, ջրերի խոխոջիւն, թռչնոց դայլայիկ, սոքա ամէնքը միացած մի... հրաշալի նուազարան են Վաղմուս...» (Փորձ, 1879, Ե., էջ 61) :

Վանքիս անունն ստուգարանութեան համար Հ. Էփրեկեան կը գրէ՝ «Վանացս հին կոնդակի մը մէջ գրուած է թէ ի հնունն կը կոչուէր Սալնապատու վանք, որուն ստուգարանութիւնը ոմանք կը համարին թէ «սա լաւ անապատ» էն է եւ ոմանք ալ մեծամեծ սալ քարերով շինուած ըլլալէն կը հետեցնեն» (Բնաշխ. Բառարան, էջ 565 կամ Գեղունի, 1905, էջ 71—72. հմմտ. Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 258 եւ Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 148) : Բարգէն Վ. Կիւլիսէրեան կ'արտայայտուի՝ «Սալ բառն ալ նոյն է, բալ = բալի հետ, սա տարբերութեամբ, որ սալը փօքք քարերու կը գործածուի եւ արգէն սալ շատ գործածական է. Սալնապատ... այսպէս կոչուած է, որովհետեւ բալով (= խոշոր քարերով) շինուած է յանուն Ս.

Լուսաւորչի» (հմմտ. Կորոս Յովհաննէս Պատրիարք, Վիեննա 1904, էջ 142, ծն. 1) : Արգեօք չէ՞ կարելի մտածել թէ վանքս իր անունն առած է Զաւնապատ գետակէն¹⁴ ; որուն մօտը շինուած է (հմմտ. Ազգր. Հանդ., 1911, էջ 80) :

Սալնապատի վանքը նոյնացուած է Զորոյ վանքի կամ Զորավանքի հետ : Հ. Ինձիճեան (Ստորագրութիւն, էջ 186—187), Հ. Սարգիսեան (Տեղադրութիւնք, էջ 258) եւ անոնց հետեւելով ուրիշներ (հմմտ. Պալեան, Իրւզանդիոն, 1900, Թ. 1067) Վարդան Աշխարհազրի սա խօսքէն «Զորապատ որ է Սալնապատ» (Saint-Martin, էջ 426) կը հետեցնեն թէ միեւնոյն վանքերն ըլլան եւ այն նախ Զորավանք կամ Զորապատ եւ ապա Սալնապատ կոչուած : Այս կարծիքին կը հակառակի Լալայեանց՝ «Ինձ թուում է որ սխալուած են : Զորավանքը գտնուել է այժմ համանուն գիւղում, որ հազիւ երկու կիլոմետր հեռու լինի սուրբ Գրիգորից, ուղղակի Կողբանց գիւղի հանդէպ, որին եւ շատ յարմարում է Թովմա Արժուանու հետեւեալ յիշատակութիւնը. Գառնայր Աշոտ ընդ գերձ քարանձառի ի յարեւելից կուսէ լեռինն Վարազայ ի վերայ գեղջն Կողպանից՝ հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հոսիփոսեանց, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեղջն Ահաւականից ի կատարած լուսաւորութեան Հայոց» (Ազգր. Հանդ., 1911, էջ 82. հմմտ. Թովմ. Արժ., Պամ., էջ 8) :

Լալայեան հաւանօրէն հետեւած է Արժուի Վասպուրական թերթին յօդուածագրին, որ երկու վանք կը ճանչնայ. մին՝ Ս. Գրիգոր կամ Սալնապատ եւ միւր՝ Զորոյ վանք (Արժ. Վասպ., 1859, էջ 171 եւ 207) եւ այս է ճիշդը, սակայն որովհետեւ վանքերս իրարու շատ մերձ եղած են եւ գուցէ իրաւական կապով ալ իրարու միացած, այս պատճառով շփոթութեան առարկայ եղած : Սալնապատ կամ Սալնաձոր¹⁵ կամ Զառնապատ տեղ մըն է, որուն սահմանին մէջ հիմնուած են Ս. Գրիգոր եւ Զորավանք, որ կանխաւ ուրիշ անուն ունենալու էր, բայց ետքէն գիւղին անունովը կնքուած, ինչպէս ուրիշ քանի մը հայ վանքեր : Հաւանաբար նախ չի-

¹⁴ Հիւրման (Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907, էջ 400) կը գրէ՝ «Սալնապատ = Զորոյ վանքը մենաստանը Տոսպ գաւառին մէջ սես վերն էջ 373 Սալին կամ սալուն? + պատ» :
¹⁵ Սալնայ ձորը տարբեր է. հմմտ. Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 239 :

նուած ըլլայ Չորոյ վանքը եւ ետքէն անոր անշքանալէն վերջ Սալնապատ եւ այսպէս շատ լաւ վերջին շրջանի գրողները կրնային արտայայտուիլ՝ Չորապատ որ է Սալնապատ, վասն զի անոր անշքանալէն յետոյ անոր մօտերը շինուած էր, նոյն իսկ գուցէ անոր պահապանը անգագլի ընելու համար: Գարձեալ կարելի է աւանդութեան համեմատ խորհիլ որ՝ Ս. Գրիգոր միայն Չորոյ եկեղեցին շինած ըլլայ, իսկ Ներսէս քիչ հետո վանքը, որ կաթողիկոսանիստ անգամ եղեր է եւ ապա վերջնոյս նսեմանալէն վերջ Սալնապատ եղած է վանք ու եկեղեցի (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 186):

Յիշատակարանի մը մէջ կը կարգանք՝ «Բլուր մի եւս կայ անդ, որ հայի ի վերայ Սալնապատու (որ) Երուսաղէմայ բլուր ասի վասն բազում պատճառանաց: Անդ կայ ամփոփեալ երկը սուրբ կուսանաց մարմինք, ընկերաց սրբոց Հոսիփոսիմեանց այլ եւ սրբոյն Հոսիփոսիմեայ հերն հողաթափն, բերօղն, որ ասի սրտկապ, այլ եւ սուրբ կանանց արիւնաշաղախք հանդերձ» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 90. հմմտ. նաեւ Վարդան Արեւելցի, Պամ., էջ 116):

Սալնապատի կամ Սալնաձորի Ս. Գրիգոր կոչուած է նմանապէս ստէպ Կողբանից վանք, որովհետեւ այդ գիւղին քովը բարձրացած է:

Լալայեանցի համեմատ (Աղգր. Հանդ., 1911, էջ 83) բաղկացած է՝ «Ս. Աստուածածնի եւ Ս. Կարապետ եկեղեցիներէ»¹⁶ եւ մի ժամանակից: Վանքը պատած է պարսպով եւ ունի երկյարկանի լաւ սենեակներ: Վանքի բոլոր շէնքերը շինուած են հասարակ, անտաշ քարով¹⁷:

Ս. Աստուածածնի եկեղեցւոյ երկարութիւնն է 10 մետր, լայնութիւնը՝ 8 մետր եւ բարձրութիւնը՝ 7 մետր: Վեց որմնասիւներու վրայ կը բոլորուին պայտածե կամարները, որոնցմէ չորսը կը կրեն իրենց վրայ հանգչող գմբէթն իր կոնաձե կաթողիկէովը, իսկ երկուքը յառաջ կը բերեն նախնախորանները փոխարինող խորշեր — եկեղեցւոյ ա-

¹⁶ Մարգարեանի կը գրէ թէ՛ արդի շէնքը կը բաժնուի երկու մասի՝ Ս. Աստուածածնի եւ Ս. Գրիգոր, փոքր եւ անշք (Արեւելք, 1901, թ. 2794):
¹⁷ Շէնքն կը գրէ՝ «Առաջին խորանը կամ տաճարը կրում է յանուն Գրիգոր Լուսաւորիչ, երկրորդ յանուն սուրբ Կարապետի եւ երրորդ յանուն Ս. Յարութեան: Երկրորդ եւս հաւանական է որ միաժամանակ շինուել են հայկապ հաստատութեամբ» (Սրբալայերէր էջ 52):

րեւմտեան կողմը: Կողակը կիսաբոլոր է եւ կողբերուն ունի մէկական խորան: Չորս փոքր եւ նեղ պատուհաններ բացուած են պատերուն մէջ, իսկ գմբէթին վրայ ամենեւին պատուհան չկայ: Այս գմբէթի մօտ, արեւմտեան կողմը, կայ հետեւեալ արձանագրութիւնը՝ «Ի թուականութեանս Հայկազեան տումարիս ի Ռ. եւ Ը (1559) ի դառն ժամանակիս. Ես Մէլիք Ղուլիջանս եւ կողակիցն իմ Խաթուն Խանաղէս¹⁸ եւ սիրամանուկը որդիքս իմ էնիաթս եւ Խաւճա Աւետս, որ բազում աշխատեցաք եւ շինեցաք դատաճարս սուրբ Աստուածածնին յիշատակ հողոց մերոց եւ ծնօզաց իմոց հօրն իմում Մէլիք Բախտիարին եւ մաւրն իմոյ Խոնչախաթունին եւ պարսպեցինք զնիւրքին Վարազ եւ ավինք ողբ Չրուան գանից ջաղացն: Չվերին Վարազ շինեցինք եւ զԳումբենից զկէսն ողբ սուրբ Աստուածածնիս եւ զկէսն վերին Վարազ, շինեցինք զՄարմերոց կարմունջն եւ սալաքս քաղաքիս: Եւ շինեցաք թ եկեղեցիս եւ ԻՍ. ժամատունս: Արդ որք հանդիպիք եւ երկրպագէք յիշել ի Տէր աղաչեմք: Առաջնորդութեան սուրբ ուխտիս Ստեփաննոս եպիսկոպոսին եւ Մկրտ. (Աղգր. Հանդ., 1911, էջ 84 եւ Արծուի Վասպուրական, 1859: էջ 173—174):

Այս եկեղեցւոյ մէջ պահուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի ճկոյթի մասունքը ականակու խաչի մը մէջ ամփոփուած:

Նաեւ այս եկեղեցին էր որ Վանի տխրահռչակ երկրաշարժին կործանեցաւ. «եւ մեծ եկեղեցին Սալնապատայ» (Առ. Դաւրիժ., էջ 492), որ ետքէն կը վերանորոգուի:

Եկեղեցւոյս առջեւ կայ նորաշէն ու հասարակ գաւիթ մը, որուն կից է Ս. Կարապետի եկեղեցին, համանման նախընթացին, միայն թէ խորաններ չունի: Գմբէթն ութանկիւնի է եւ վրան արեւի ժամացոյց մը կայ: Կողակը բոլորաձեւ եւ կամարակապ. իսկ վէմքարը սեպաձեւ արձանագրութեամբ ծածկուած: Ունի միակ դուռ մը, որուն աջ կողմը կայ «Չ» թուականը (Աղգր. Հանդ., 1911, էջ 84): Այս եկեղեցւոյ մասին կը գրէ Ղեւոնդ Տոսպեցի՝ «Չ» (1260) շինուին նոր ի նորոյ Սալնապատայ սուրբ Կարապետ եկեղեցւոյն, որ է ի Տոսպ գաւառի. այս վանք այժմ Ս. Գրիգոր յորջորջի ի յետնոցս» (Դիւան, Ժ., էջ 493):

Վանքին պարսպէն ներս կան կրկնայարկ

¹⁸ Մարգարեանին կը կարդայ՝ «Խանսեղի», «Խնաթ», Արեւելք, 1909, էջ 2794:

սենեակներ, փարախներ եւ ախոռներ. մեծ մասովը Արբահամ եռանդուն վարդապետէն շինուած (Արծուի Վասպ., 1859, էջ 174)¹⁹:

Վանքին հին կոնդակին համեմատ անշինուած եւ հողերով ճոխացուած է Ս. Գրիգոր Լուսաւորչին եւ վերջէն աւելի պայծառացուած եւ ընդարձակուած Ս. Ներսէս Պարթեւէն (հմմտ. Արծուի Վասպուրական, 1859, էջ 171—173. հմմտ. եւ Թովմ. Արծ., Պամ., էջ 214): Ս. Գրիգոր հոս կը թողու նաեւ եպիսկոպոսական մատանին եւ ուրիշ պատուական իրեր (հմմտ. վերը):

Անուանին Վարդան վարդապետ (Հօգեաց վանքէն) Խաւարաստի վանքին մէջ ինքզինքն անապահով զգալով եւ փախչելով «յանօրինաց» կու գայ Կ'ապաստանի «ի սուրբ Սալնապատ» ուր եւ 855 թուականին (այս է 1406 թուականին) «եհաս օր վախճանի նորա եւ անդ եղեալ կայ մարմին նորա...» (Թովմ. Մեծոփ., էջ 41 եւ 49). հմմտ. նաեւ Չարհանէլեան, Պամմ. հայ. դպրութեան, Բ., էջ 152—153): Կիրակոս կաթողիկոսի (Վիրապեցւոյ) հայրապետական ընտրութեան կը մասնակցի «տէր Կիրակոս Սալնապատայ» (Թովմ. Մեծոփ. Յիշատակարան, էջ 52)²⁰, իսկ բարունակեան Սարգիս «ի սուրբ ուխտէն Սալնապատայ» Կիրակոս Վիրապեցիին ընտրութեան համակիր ու ջատագորով ըլլալուն համար կը մատուցի «անօրինաց» (Անդ, էջ 81—82):

Այս ատենները՝ 1449ին թուրքախոսութեամբ տրեւելիս Աւետարան մը «Սալնապատայ վանաց Ս. Կարապետի եւ սուրբ Աստուածածնի» յիշատակ կու տայ (Նօտարք, էջ 162 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 400): Քանի մը տարի վերջ 1457ին ձաչոց մը կը գրուի, ուր կը յիշուի Ստեփաննոս Գօզալ առաջնորդը՝ «Եւ արդ ես Մխիթար կրօնաւորս ստացայ զսուրբ զիրքս զայս ի հալալ վաստակոց իմոց եւ ետու զսա յիշատակ ի հոյակապ եւ յերկնաման գմբէթայարկ եւ աստուածազարդ կաթողիկէ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին... եղեւ սուրբ զիրքս Սալնապատայ տէր

¹⁹ Վանքիս մասին տեսնել զեռ P. Müller-Simonis, Du Caucase au Golfe persique, Paris 1892, էջ 269—270. Արաբս, 1898, էջ 67. Գեղունի, 1905, էջ 72. Բիւզանդիոն, 1909, թ. 35. Մուրճ, 1903, Ը., էջ 38—39 եւս եւս:

²⁰ Անդ էջ 53 թղթով մասնակցողներուն մէջ եւս կը յիշուի «տէր Կիրակոս», մինչ ինչ ինչ օրինակներ չեն յիշատակեր (անդ, էջ 88):

Ստեփաննոս Գօզալ եպիսկոպոսին եւ այլոց առաջնորդացն որ դան զկնի» (Նօտարք, էջ 185—186):

Մկրտիչ արեղայ 1481ին կը գրէ Աւետարան մը՝ «Ի վանս որ կոչի Սայլաւանապատ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Կարապետի եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի ի թվականիս Հայոց ՁԼ» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաքունն Յիշատակարանաց):

Չորս տարի յետոյ (1485ին) «ի յաստուածարնակ... սուրբ ուխտս, որ Սալնապատ կոչիւր» կը գրուի Աւետարան մը (Բարխուդարեան, Արցախ, էջ 148):

Գրեթէ կէս դար մը վերջը՝ 1559ին Ստեփաննոս վանահօր օրով եկեղեցին կը վերանորոգուի (հմմտ. վերը): Իսկ 1570ին հոս կ'աւարտի Աւետարան մը «ի հէրպետութեան Մկրտիչ արեղային եւ յառաջնորդութեան Ստեփաննոս եպիսկոպոսի» ու կը մագթութի յիշել՝ տէր Յովսէփ, տէր Ներսէս, տէր Ստեփաննոս եւ Յովհաննէս Մովսէսյան (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 673—674):

